

ԱՐՄԵՆ ԻՐԱՆԵՇԼԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՐՄԱՆ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ ԹԱՏՐԵՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Սփիւռքահայ թատերագիր Արման Վարդանեան (Իսթանպուլ, 1930) հայ թատերագրութեան ամենէն արդիական մշակներէն մին է: Գրական ասպարէզ մտնելով հասուն տարիքին (47 տարեկան) եւ այն ժամանակաշրջանին երբ Իսթանպուլի մէջ ծաղկում կ'ապրէին Չարեհ Խրախունիի, Չահրատի եւ այլոց նորովի բանաստեղծութիւնները, ան գրած եւ լոյս ընծայած է 21 թատերախաղեր, որոնց վերնագիրներն իսկ կը մատնեն իր ստեղծագործութիւններուն առանձնայատկութիւնը¹: Իր գործերն ոմանք թարգմանուած են անգլերէնի, ռուսերէնի եւ թրքերէնի: Զանի մը հատը բեմադրուած է Լոնտոնի եւ Երեւանի մէջ:

Հետեւելով արեւմտեան, յատկապէս եւրոպական թատերական նորագոյն զարգացումներուն, Ա. Վարդանեան գրած է առաւելաբար անհեթեթի (աբսուրդի), բայց նաեւ գեղարապաշտ (սիւրռէալիստ) թատրոնի աւանդութիւններուն հետեւողութեամբ: Անոր բոլոր թատերախաղերը կը յատկանշուին արտաքին շարժումի եւ մէկ կեդրոնական սիւթի բացակայութեամբ. փոխառենք, դիպաշարը հիմնուած է կուռ ու արագ երկխօսութիւններու եւ իրար հրմշտկող պատմութիւններու վրան, որոնք յաճախ, արտաքնապէս ոչ մէկ առնչութիւն ունենալով, ի վերջոյ շաղկապուելով կը կազմեն թատերական ամբողջութիւն մը: Հակառակ որ Վարդանեան կը սիրէ իր թատրերգութիւնները «խաղ» կոչել, անոր կերպարները չեն խաղար, այլ կ'ապրին, ինչպէս ինք կը թելադրէ «*փոխանակ խաղալու, կարելի եղածին չափ ջանացք ապրիլ*» (*Խալիկը*)²: Անոր մեծապէս կը նպաստէ այն հանգամանքը, որ խաղերուն սիւթերը առնուած են սովորական կեանքի ամենէն պարզ խնդիրներէն, որոնք սակայն ընդելուզուելով, միահիւսուելով եւ գերարագ կշռոյթի

¹ Թոխորը՝ 1977, Մամլեկը՝ 1977, Ազոաուկը՝ 1978, Շաղամաթը՝ 1979, Խալիկը՝ 1980, Ծոկանը՝ 1980, Կանկրուկը՝ 1981, Պախուրցը՝ 1988, Սակուրը՝ 1989, Գեղծակը՝ 1989, Երևչակը՝ 1990, Գոտիցը՝ 1990, Ախացելը՝ 1996, Ջալուրիքը՝ 2002, Ջիւսկը՝ 2002, Կտցարը՝ 2003, Երիցուկը՝ 2003: Սոյն յօդուածը պատրաստ էր Իրատարակութեան, երբ լոյս տեսաւ Արման Վարդանեանի չորրորդ հատորը՝ *Շունչ Մը*, որ կը պարփակէ 2010ին գրուած 4 թատերախաղերը՝ *Անծրուկը*, *Գոտամը*, *Թաւուտը*, *Հաղաղակը*:

² *Խաղ մը*, էջ 390:

ենթարկուելով, թատերագութան մեջ կը ստեղծեն անհանգիստ, անտրամաբանական ու առեղծուածային վիճակներ:

Ա. Վարդանեանի թատերական գլխաւոր կերպարը Ի. դարու լուսանց-քայնացած մարդն Է. ցաւերով ու մտահոգութիւններով բռնաւոր, անորոշու-թեան ոլորտներուն մէջ թափառող մարդ արարածը, որ ընդհանրապէս ոչինչ տուած է կէսանքին ու տեւական փնտռութիւնի եւ մանաւանդ սպասումի մէջ Է: Այդպիսով, իր գործերը կը յատկանշուին ընթացիկ ըմբռնումով հերոսի ու հերոսականի միտումնաւոր բացակայութեամբ: Կերպարները անընդհատ հարցումներ ու խնդիրներ կ'արծարծեն, որոնք սակայն կը մնան անպա-տասխան ու անլոյծ, այնքան, որ խաղին վերջը, իսկական աւարտ չէ, այլ նոր սկիզբի մը նախադրեալը, որ կը շարունակուի ընթերցող-հանդիսատեսին մտքին ու խոհերուն մէջ, եթէ կերպարներուն յուսախաբութիւնը չէ փոխան-ցուած անոր:



Ա. Վարդանեանի հերոսները կը կրեն հայկական անուն-մականուններ: Ըստ էութեան անոնք հայ մարդիկ են, սակայն առանց շեշտուած ազգայ-նութեան: Արման Վարդանեանի գործը խորապէս ուսումնասիրած Լեւոն Մուրաֆեան, որ հեղինակին թատերագրական իրայայտութիւններուն եւ միջնադարու աւանդութիւններուն հետ աղերսներ կը գտնէ, կը գրէ. «*Մռիասա-րակ, թատերագիրը չի սիրում անվերջ խօսել իր ազգային պատկանելիու-թեան մասին, չի սիրում երկարաշունչ դատողութիւններ անել ազգային պատմութեան ու ազգային ճակատագրի մասին: Ընդամենը հպանցիկ, եթէ կարելի է ասել՝ էսքիզային են նրա խորհրդածութիւններն ու դատողութիւն-ները, երբեմն ազգային պատմութիւնից մէկ-երկու անուան յիշատակումն արդէն ստեղծում է ազգային խորապատկեր*»³: Այո, ցաքցուցիւ են Վարդա-նեանի ազգային հայեացքները, սակայն աւելին են մի քանի անունի յիշա-տակումէն, մի քանի երկխօսութեան կազմակերպումէն: Թուրքիոյ մէջ, ան բնականաբար պիտի չբարձրածայնէր ազգային հարցեր: Այդուհանդերձ, օգտուելով իր թատերագութիւններուն «անհեթեթ»ի, գերիրապաշտ ոճէն, ան յաջողած է ներկայացնել իր տեսակետները եւ վերաբերմունքը հայկական տարբեր խնդիրներու մասին, ընդհուպ մինչեւ հայ-թուրք յարաբերութիւն-ներու ոլորտը, յաճախ քողարկուած, բայց երբեմն նաեւ թափանցիկ ակնար-կութիւններով, առանց ճոռումբան յայտարարութիւններու. հանդարտութիւն մը կ'իշխէ հեղինակին մօտեցումին մէջ. կարծես խօսքը կը վերաբերի առօրեայ, սովորական երեւոյթի մը. սակայն կտրուկ հաստատումները, սուր ակնարկութիւնները առերեւոյթ հանդարտութեան տակ կը պահեն խորունկ զգացումներ ու խոհեր:

³ Լեւոն Մուրաֆեան, *Խաղ Ըստ Արման Վարդանեանի*, Երեւան, 1999, էջ 231

Արեւմտահայ նորագոյն թատրերգութեան մէջ հայ-թրքական յարաբերութիւններուն տարբեր երեսակներուն անդրադառնալու իր իւրայատկութեամբ, Ա. Վարդանեան ինքնաբերաբար նոր եւ ինքնատիպ մօտեցում մը կը ցուցաբերէ Յեղասպանութեան հարցի ներկայացման ձեւին հանդէպ, որ ամբողջովին այլ է սփիւռքահայ թատրերգութեան մէջ ձեւաւորուած աւանդողներէն: Կիրառուած այլաբանութիւնները (իւր ձագերը կերած կատուին դատը *Յեղծակը* գործին մէջ), երկդիմի ակնարկութիւնները, եւ մասնաւորօրէն ուղղակիօրէն առնչակից չլլալը հայկական միջավայրին ու ազգային հարցերուն, յաջողապէս կը նպաստեն զուտ ազգային գերինչիի իմամարդկայնացումին, յատկանշիչ մը, որմով Արման Վարդանեանի գործը կ'առանձնանայ արեւմտահայ նորագոյն թատերագրութեան ասպարէզին մէջ:

Խօսելով հայ-թուրք յարաբերութիւններուն ամենատարբեր երեսակներուն մասին, Արման Վարդանեան կ'անդրադառնայ պատմութեան ընթացքին եւ մինչեւ օրս ալ շարունակուող թրքական քաղաքականութեան այն դրսեւորումին, որ կը յատկանշուի ոչ-թուրք փոքրամասնութիւնները ճնշման տակ պահելուն մէջ:

Այս առումով խորհրդանշական են Ներսէս Վարժապետեան անուն-կերպարին արտայայտութիւնները: Ան արտաքնապէս ոչ մէկ կապ ունի նոյնանուն պատրիարքին հետ, սակայն կարգ մը ակնարկութիւններ յստակօրէն կը համապատասխանեն անոր կենսագրութեան ու ժամանակակիցներու տուած հակասական բնութագիրներուն⁴, թեւէ Ա. Վարդանեան փոքրինչ թանձրացուցած է գոյները, աւելի շեշտելու համար տիրող կացութիւնը: Այս կերպարը *Մամլեկը* թատերախաղին հերոսներէն է՝ սովորական մարդ մը, որ կը գանգատի իր կացութենէն. ատենը մէկ «կը զռայ», ու իր այդ արարքը կը պատճառաբանէ ըսելով, թէ «Արդէն հոս ամէն մարդ ուշ կամ կանուխ պիտի պապալէ կամ...: Ամէն բան կրնան ընել տալ, ամէն կաղա-

⁴ Ներսէս Պատրիարք Վարժապետեան՝ Կ. Պոլսոյ հայոց պատրիարք (1873-1884): Սան Ստեփանոյի եւ Պերիիի միջազգային վեհաժողովներուն հայկական գաւառներուն մէջ բարեփոխողներ առաջացնելու համար մեծ աշխատանք կատարած է եւ օսմանեան, եւ օտար պետութեանց շրջանակներու մէջ: Բարձրագոյն Դրան հետ վարած է չափաւոր քաղաքականութիւն, որ տեղիք տուած է հակասական մեկնաբանութիւններու: Յրաժարած է Պատրիարքական Աթոռէն, ի մէջ այլոց Նաեւ «ազգին կացութեան համար ակնկալուած բարեւարդեանց համար ազգու միջոցներ չգործարդուիլը»՝ պատճառաբանելով: Վերահաստատուած է Պատրիարքական Աթոռին: Իր պատրիարքութեան օրերուն սկիզբ առած է հայ-ազգային ազատագրական պայքարը, տեղի ունեցած են Սասնոյ եւ Կարնոյ դպքերը: Իր ջանքերով ստեղծուած են «Միացեալ», «Ազգանուէր» ընկերութիւնները, «Սովելոց Յանձնաժողով»ը, հիմնուած է Կեդրոնական Վարժարանը, բարեկարգուած է Ազգային Յիւանդանոցը: Ներսէս Պատրիարք Վարժապետեան ապրեցաւ պատմական եռուն ժամանակաշրջանի մը մէջ, բերելով գործնական մասնակցութիւն, քնականաբար ձեռք ձգելով եւ հակառակորդներ, եւ բարեկամներ:

⁵Մաղաքիա Արք. Օրմանեան, *Ազգապատում*, Գ. հատոր, գլուխ 2863:

պարի կրնան խօթել ու հանել, մինչեւ որ ինքնութիւնդ բոլորովին կորսնցնես ու ապրելու ստիպուած էի կ'ըսես... ցառ յայտնի չընելու համար գռալ պիտի սկսիս... միմոսի վերածուած»⁵։ Մի՞թէ Ա. Վարդանեան չ'ուրուագծեր դիմագիծը այն հայուն, որ կ'ապրեր Օսմանեան Կայսրութեան մէջ, հլու-հնազանդ, ինքնութիւնը կորսնցուցած, սոսկ գոյութիւն պահպանելու ի խնդիր։ Թատերական կերպարը կը շարունակէ. «Եթէ գոյութիւնս իմաստ եւ պատճառ ունէր... ինչո՞ւ ինծի ցոյց տուին երկրորդ կարգի հայրենակցի... նոյնիսկ անասունի վարմունք... [որով] ի վերջոյ սկսայ գռալ... Այնքան ստորադասուեցայ որ կոնակս կըեցաւ։ Մէքքս ծոեցաւ։ Եւ այս բոլորը... տարիներու ընթացքին յամբօրէն տեղի ունեցաւ»⁶։ Այս բոլորը սակայն տեղի ունեցած են երբ ինքնութեան դրսեւորման ամեն փորձ բախած է ծախողութեան պատին։ Վարդանեան կու տայ ժԹ. դարու պահպանողական մտայնութեան արձագանգը, երբ իր կերպարին ըսել կու տայ «Ամեն բանէ առաջ յանցանք գործած ենք... մեր ձեռքէն եկածը ըրած ենք որ ձերբակալուինք... դատապարտուելու համար ինչ որ պէտք է ըրած ենք»⁷. որպէսզի այս բոլորը չպատահին «Պէտք է ուղեղդ գործածես, լաւ կազմակերպուիս... հետեւանքները առաջուրէն պիտի նախատեսես»⁸։

Անցում կատարելով հին օրերէն դեպի մերօրեայ Թուրքիա, Ա. Վարդանեան տարբեր գործերու մէջ կը զգացնէ իշխող վարչակարգին հանդեպ իր վերաբերմունքը. օրինակ *Թոխորը*-ին մէջ կ'ըսէ «*Դու ճակնդեղի առաւելութեան մասին կը խօսիս, մարդը քեզ հայրենադաւութեամբ կրնայ ամբաստանել*»⁹։ Որքան թափանցիկ է Թուրքիոյ չարաբաստիկ «Ունեւորութեան Տուրք»-ին¹⁰ մասին *Ազգաւուկը* թատերախաղի հետեւեալ ակնարկութիւնը.

⁵ *Խաղ Մը*, էջ 125-126

⁶ Նոյն, էջ 170-171

⁷ Նոյն, էջ 162։

⁸ Նոյն, էջ 163։

Որքան նման է այս կեցուածքը Արփիար Արփիարեանի *Կարմիր ժամուցքի* Զայրապետ ԷՖ. Զիրքճեանի կերպարին, ուր Արփիարեան խտացուցած է օրուան պահպանողական, հակայեղափոխական հայուն հարազատ խոհերն ու դիրքը ազգային հարցերու, հայ-թրքական յարաբերութիւններուն մասին։

⁹ Նոյն, էջ 23.

Այս խօսքը ունի նաեւ ինքնակենսագրական բնոյթ։ Ա. Վարդանեան 1955-ին ամբաստանուած է իբրեւ խորհրդային լրտես, եւ դատապարտուած է մահուան։ Երկարատեւ ջանքերու շնորհիւ պատիժը նախ փոխուած է ցմահ, ապա՝ տասնամեայ բանտարկութեան, զոր ան անցուցած է Թուրքիոյ տարբեր բանտերուն մէջ մինչեւ 1965՝ ազատ արձակումը։

¹⁰ «Ունեւորութեան Տուրքը» (Վարլըք Վերկիսի) Բ. Զամաչխարիային Պատերազմին, Թուրքիոյ վարչապետ Շիւքրի Սարաճօղլուի կառավարութեան կողմէ պարտադրուած հարկային քաղաքականութիւնն էր, որ ի գործ դրուեցաւ Նոյեմբեր 1942-ին, տնտեսապէս ճնշելու համար յատկապէս երկրի ոչ-մահմետական փոքրամասնութիւնները։ Տուրքը չեղեալ յայտարարուեցաւ 1944-ին, սակայն, ի հետեւանք անոր, հազարաւոր

«Տարի մը անսովոր տուրքեր վճարած եւ բառին բուն իմաստովը մոխիրի վրայ նստած էինք»¹¹։ Թուրքիոյ մէջ իրար յաջորդող զինուորական յեղաշրջումները, ամէն տեսակի քաղաքական հալածանքները, ընկերային շարժումներու տահմանափակումները կամ արգելքները սարսափի ուրուական տարածած էին երկրին մէջ։ Ահա թէ ինչ կ'ըսէ *Շադամաթը* թատերգութեան հերոսը. «*Միշտ դողի մէջ եմ... Ամէն անկիւնէ կասկածով կը դառնանք... Սուսկի նման գետնէն թշնամիներ կը բուսնին... Անվաստ նկատուած երկու հակառակորդներ ժամանակի ընթացքին քսաներկուքի կը բարձրանան... հետզհետէ կը պզտիկնաս, կը նսեմանաս եւ օր մըն այլ կը չքանաս*»¹², կամ *Կոցարը* թատերախաղին մէջ՝ «*Կ'ուզէի ապրիլ տեղ մը, ուր մտածելը ոչ թէ յանցանք, այլ չմտածելը յանցանք ըլլար*»¹³ եւս։

Եթէ վերոյիշեալ եւ տասնեակ մը այլ նմանատիպ ակնարկութիւնները կարելի է տարածել ընդհանրապէս Թուրքիոյ այլախոհ տարրին հանդէպ կիրարկուած քաղաքականութեան վրան, առանց ազգային կամ կրօնական խտրութեան, ապա Ա. Վարդանեան տարբեր տեղեր անդրադարձած է նաեւ միայն հայութեան հանդէպ ցոյց տրուած որոշակի թշնամական վերաբերմունքին, տալով անոր իւրօրինակ դրսեւորումները եւ անոնց ազդեցութիւնը ժողովուրդին վրան։ Օրինակ *Ծովանքին* մէջ հեղինակը կ'արձանագրէ կարճ երկխօսութիւն մը, «-*Պատմութեան մէջ շատ պատահած են դէպքեր (երբ) ոչ միայն արիւն ծծելու, այլ սպաննելու համար կու գան ու կրկին չես զգար։ - Ոչխարամտութիւն*»¹⁴։ Տեղահանութիւնն ու ջարդը այնքան խոր հետք թողուցած են մարդոց էութեան մէջ, որ *Կոցարը* թատերախաղի հերոսը պատրաստ է հանդուրժելու ամէն տեսակի անարդարութիւն. «*Այս վիճակիս կ'ուզեմ որ ամէն ինչ այս ծելով շարունակուի։ Չիս տեղահան չընեն...*»¹⁵։ Այս եւ յաջորդ մէջբերումները, որոնք յստակօրէն հեղինակային վերաբերմունքի ալ արտայայտութիւններ են, մասնակի հերքումն են Լ. Մութաֆեանի այն տեսակէտին, թէ «*ընդհանրապէս, Արմէն Վարդանեանի հերոսները չունեն քաղաքական մղումներ*»¹⁶։ Այո, հեղինակին մտահոգութիւնը «*անհատի հոգեբանական նկարագրի բացայայտման խնդիրներն*» են, սակայն համաձայն չենք որ այդ պատճառով «*հեղինակը խոյս է տալիս որոշակի ընկերային-քաղաքական մթնոլորտից*»¹⁷։ Ան պարզապէս կրցած է համատեղել

հայեր արտագաղթեցին Թուրքիայէն, զոր ժխտականօրէն ազդեց իսթանպուլահայ գաղութին կենսունակութեան վրան։

¹¹ Նոյն, էջ 78։

¹² Նոյն, էջ 287։

¹³ *Լաւ Մը*, էջ 289։

¹⁴ *Խաղ Մը*, էջ 483։

¹⁵ *Լաւ Մը*, էջ 290։

¹⁶ *Խաղ Ըստ Արման Վարդանեանի*, էջ 270։

¹⁷ Նոյն։

ազգային-քաղաքական անհատական-հոգեբանականին, ընդ որում առաջինը թաքցնելով երկրորդին մեջ:

Հայոց վրայ գործադրուած ցեղասպանութեան եւ անոր հետեւանքներուն, թրջական ուրացման քաղաքականութեան մասին խօսիլը, եթէ վերջին քանի մը տարիներուն նուազագոյն չափով մը կարելի դարձած է Թուրքիոյ մէջ, ապա տասնամեակներ շարունակ անկապ կատարելապէս արգիլուած թեմա էր: Այդուհանդերձ, ինչպէս վերը տրուած մէջբերումները ցոյց տուին, Արման Վարդանեան ատենին կրցած է անդրադառնալ նոյնիսկ ամենէն արգիլեալ սիւրբերուն: «Թոխորը» թատերախաղին մէջ կայ այսպիսի խօսակցութիւն մը, արտաքնապէս անկապ, սակայն խորքին մէջ յստակօրէն թափանցիկ. «-Մարդ ինչո՞ւ անբարեբեր, գեղեցկութենէ զուրկ, մշակութեան անյարմար տեղ մը կ'երթայ ու կը հաստատուի: -Մարդ իր կամքով չ'երթար... այլ կը ստիպուի երթալ: ...Այնպիսի կողոպուտի կամ բնական աղետի կ'ենթարկուի որ մեկնիլ կը ստիպուի»¹⁸: Պարզ է որ «կողոպուտ» կամ «բնական աղետ» արտայայտութիւնները պէտք է հասկնալ տեղահանութիւն, ջարդ իմաստներով: Անուղղակիօրէն ակնարկելով Օսմանեան Կայսրութեան, ապա նաեւ Հանրապետական Թուրքիոյ մէջ հայութեան թիւի զգալիօրէն նուազումին, Ա. Վարդանեան կը նշէ. «*Բոլոր անոնց որոնց մահուան պատճառը յայտնի չէ, անպայմանօրէն սպաննուած են*»¹⁹: *Խալիկը* թատերախաղի հերոսուհին՝ Չապելի այն դատումին մէջ, թէ այն մարդիկ որոնց մահը վճռուած է «*օր առաջ պէտք է ճամբայ ելլեն*», Յովհաննէս Փիլիկեան նաեւ կը տեսնէ «*Հայոց տառապանքներուն արծազանգները*, որոնք կրնան նոյնպէս, խորհրդանշականօրէն վերաբերիլ Հայ Ժողովուրդի ճակատագրական փորձառութեան»²⁰: Հայաջնջումին մէջ տեսնելով «Հայկական Հարց»-էն ազատելու միջոցը, թուրք պետութիւնը՝ Ապտիկ Համիտ Բ. Էն մինչեւ իրթիհատական իշխանութիւն, կիրարկեց զանգուածային ջարդերու քաղաքականութիւնը. ասոր անդրադարձը քանիցս կը հանդիպինք Ա. Վարդանեանի թատերախաղերուն մէջ: Այսպէս, եթէ հակամարտ կողմերը հաշտեցնել, հաւասարապէս պատժել անկարելի է, ապա պէտք է «...*իրարմէ բաժնել, հեռու տեղեր աքսորել... որ յառաջիկային որեւէ ձեւով անգամ մըն ալ քով քովի չկարենան գալ*» (Մամլեկը²¹), կամ «Պատմութիւն ըսածդ այդպէս պէտք է ըլլայ, վախճան մը պէտք է ունենայ: ...Ժողովուրդին գլխուն մէջ տեւական հարցումներ պէտք չէ տեղծուին» (Շաղամաթը²²), «Կրիան» տէրն է շրջապատին:

¹⁸ *Խաղ Մը*, էջ 35:

¹⁹ Նոյն, էջ 174:

²⁰ Յովհաննէս Փիլիկեան, *Արման Վարդանեանի Թատրերգութիւնները*, «Նոր Սերունդ», Լոս Անճելէս, Հոկտեմբեր 1987:

²¹ Նոյն, էջ 175:

²² Նոյն, էջ 349:

գորտը՝ իր արագաշարժությունը, համակրելիությունը, հրապոյրը կը զգացնէ անոր. կրիան պիտի նախանձի եւ վերջնական հարուածը պիտի տայ աղակարար ու արագաշարժ խեղճ գորտին, որ միշտ իրեն հետ կը մրցէր եւ ինչո՞ւ չէ, շատ անգամ ալ մրցումը կը յաղթէր» (Ճոկանը²³): Կեղանիներու օրինակներով խօսելու առակներուն յատուկ (Ալգեկցի, Լաֆոնթէն եւ ուրիշներ) այլաբանութեան այս ձեւին կը հանդիպինք նաեւ *Յեղծակըին* եւ *Շաղամաթին* մէջ, որոնք կ'ակնարկեն իր ծագերը կերած կատուի մը. Բնորոշ զուգահեռներ կան նաեւ *Կտցարը* թատերախաղին մէջ ուր կը հանդիպինք 10 դարէ ի վեր մարդկութեան գլխուն փորձանք եղող «շնագայլին»²⁴, մարդոց գլխուն օձ լեցնող, եփող ու թոյն արտադրող «աղուեսին»²⁵, ժողովուրդներ բնաջնջող «մարախներուն»²⁶ եւն.: Շնագայլը կամ «գորշ գայլը» մոլեռանդ թրքութեան խորհրդանշին է դարձած, իսկ խորամանկ աղուեսի յատկանիշեր բազմիցս վերագրուած են եւրոպական, յատկապէս Անգլիոյ՝ «խորամանկ Ալբիոն»ին երկրեեսակի քաղաքականութեան, եւն.: Այլաբանութեան դասականացած միջոցին դիմելով, արուեստի նորարարական ու դասական արտայայտչաձեւերու իւրովի միաձուլումը յատուկ արժէք կը հաղորդէ Ա. Վարդանեանի գործին:

Թատերագիրին ազգային հայեացքներուն արտացոլումը չի սահմանափակուիր միայն այլաբանութեամբ. անիկա առանց անուանելու, բայց ուղղակիօրէն կը կատարէ հաստատումներ, որոնք դիտուելով նիւթին ընդհանուր պարունակին մէջ, կասկած չեն թողուր որ խօսքը Տեղասպանութեան մասին է: Մարդը կրողն է լեզուին ու անով ստեղծուած մշակոյթին. «*Լեզու մը սպաննած, մշակոյթ մը մահուան դատապարտած են*»²⁷ կ'ըսէ թատերգակը *Թոխորքին* մէջ, անուղղակիօրէն ակնարկելով հայաստանութեան, իսկ *Շաղամաթին* մէջ կը պահանջէ՝ «*Ինձի, մեր մէջ, մեծ խորմէ հարուստ մէկը ցոյց տուր: ...Ամէն ինչ կողոպտուած, ոչնչացուած եւ միայն պատմութիւնը (իմա՞ յիշողութիւնը - Ա.Բ.) մնացած է*»²⁸: Տարագիրներու ժառանգորդները Սփիւռքի մէջ մի քանի տասնամեակէն կրցան հասնիլ նիւթական որոշ բարօրութեան, սակայն սկսելով գերոյեն անոնք եւ անոնց հայրերը երկրէն տեղահանուեցան իրենց հետ բերելով միայն ցաւ, գայրոյթ, վրեժ, բայց նաեւ վերապրելու կամք ու կորով:

1981ին հրատարակուած *Կանկրուկը* թատերախաղը, նոր որակ է Ա. Վարդանեանի գործերուն մէջ: Բաղաքական, ազգային հարցերու ամբողջա-

²³ Նոյն, էջ 533:

²⁴ *Լաւ Մը*, 322-323:

²⁵ Նոյն:

²⁶ Նոյն:

²⁷ *Խաղ Մը*, էջ 43:

²⁸ Նոյն, էջ 357:

կան արծարծումեն խուսափող թատերագիրը կը ստեղծէ անդենականէն վերադարձած Զնարիկի կերպարը, որուն երկրային կեանքը անցած է մեծ անիրաւութիւններու ընդմէջէն՝ Թատերախաղին մէջ Ա. Վարդանեան յակասէ յանուանէ կը յիշէ հայն ու անոր տառապանքները պատմութեան ընթացքին: «*ժամանակին ժողովուրդը մը կար զոր հայ կը կոչէին... դեռ գոյութիւն ունի՞ն, այդքան հալածանքներէ ու անարդարութիւններու ենթարկուելէ ետք դեռ կը տեսնե՞ն*»²⁹ Եղիշէի հարցումին Զնարիկ կը պատասխանէ թէ ինք այդ ժողովուրդին ներկայացուցիչներէն մէկն է, եւ անոնք «*Յամառօրէն կը պայքարին անորոշութեան մէջ եւ իրենց գիտցած ձեւով առանց իրենց պատեաններէն դուրս ելլելու կը յառաջդիմեն*»³⁰: Այլուր, հայուն վերապրումի գաղտնիքը Ա. Վարդանեանի մէկ այլ հերոսը՝ Բարին, կը տեսնէ այն «հրաշագործ խաղալիք»ին մէջ, որ «*երեսունվեց անկիւն ունի եւ գունաւոր է... [հայրը - Ա.Ի.] հնարած է... իմ ալ ամբողջ էութիւնս այդ խաղալիքին վրայ հիմնուած է*» (Դեղծակը³¹): Հայաստեղծ հայերէն այբուբենին՝ ազգապահպանման անկրկնելի գործօնին կարեւորութիւնը դժուար է սահմանել աւելի այլաբանական ու սեղմ տողերու մէջ:

Ընդհանրապէս, Ա. Վարդանեանի կերպարներուն մասին կազմուած կարծիքը այն է, որ անոնք կ'ապրին անցեալին մէջ. ապագան գոյութիւն չունի անոնց պարագային. այդուհանդերձ, աչ ու ձախ կը հանդիպինք այնպիսի արտայայտութիւններու, որոնք կը յուշեն առկախ մնացած դատի մը, անլոյծ մնացած հարցի մը, պահանջատիրութեան մը գոյութիւնը: Զնարիկ կը գանգատի թէ չէ կրցած ապրիլ իրեն սահմանուած կեանքը, կը տեսնէ թէ մնացողները փառաւորապէս կ'ապրին, մինչ ինք ապրեցաւ թշուառութեան մէջ «*Առանց նոյնիսկ գնահատանքի ու նեցուկի*». այս խօսքը, դիմացիկին ըսել կու տայ՝ «*Զեզի քիչ առաջ չըսի՞ թէ դրամ պահանջելու եկած է*»³²: Իսկ անդենականէն եկողը ոչ թէ դրամ, այլ իր չապրած կեանքին հաշւոյն փառքով ապրողներէն հատուցում կը պահանջէ, զոր տուեալ երկխօսութեան մէջ կերպարանափոխուած է դրամի:

Այս ակնարկութենէն անդին, Ա. Վարդանեան գեղարուեստական հնարամտութեամբ կը յաջողի ներկայացնել հայկական պահանջատիրութիւնը՝ թեկուզ անոր ժխտումով ամրագրուած: Ան կ'օգտագործէ թրջական ուրացման քաղաքականութեան յատուկ բառապաշար, տեղ հասցնելու համար բոլորովին հակառակ միտքը, գաղափարը: Օրինակ բերելով անցեալին մէջ ձգելու թրջական քարոզչամեքենային յատուկ խօսքեր՝ «*Մոխրացած դէպքեր կրկին երեւան հանելով նոր թիրիմացութեան ու անհաս-*

²⁹ Նոյն, էջ 669

³⁰ Նոյն:

³¹ *Յաւ Մը*, էջ 222-223:

³² Նոյն, էջ 603

կացողութիւններու պատճառ կ'ըլլայ... հրահրելու բնաւ պէտք չկայ» (Ձինս-կը³³), կամ «Մենք նախապէս պատահած դէպքերու մասին չենք խորհիր» (Կանկրուկը³⁴), Ա. Վարդանեան ճակատէն կը յարձակի ուրացման քաղաքականութեան վրան, իբրեւ թէ պատահական նստարանի մը կամ մաշած հագուստի մը մասին խօսելով: *Ճոկանը* թատերախաղին մէջ կան հետեւեալ հաստատումները. «*Հակառակ որ նախապէս ծեղի կը պատկանէր* [նստարան մը ցոյց տալով Ա.Ի.] *ըլլայ որ սա նստարանին կարիքը զգալով կրկին ունենալ ուզէք ու ետ առնել յանդգնած ըլլաք: ... Զըլլայ որ իբր գորտ, կրիայի մը առջեւ կենաք ու ձեր անտանելի ծայնով զինք նեղացնէք ու անհանգիստ ընէք ձեր անկարելորդ ու աննշան դատին համար: ... Գորտ մը երբեք պէտք չէ այդ անպատկառութիւնը գործէ կրիայի մը դէմ, հակառակ որ կրիան է գայն այդ վիճակին բերողը*»³⁵: Թատերագիրը գտած է իր միտքը յստակօրէն ըսելու ձեւը. սա կը հրճուեցնէ զինք ու էջ մը անդին ան կրկին կ'անդրադառնայ նիւթին. «*Եթէ մէկը կոնակէր հագուստդ առած, հագած ու մաշեցուցած է, այլեւս ի՞նչ իրաւունք ունիս իրմէ ետ ուզելու այդ մաշած ու հալած հագուստը: Մնաց որ դուն հինցածն ալ չես ուզեր, այլ նորը կը պահանջես*»³⁶: Որքան թափանցիկ է հեղինակին խօսքը, նոյնքան անխառն է անոր սուր հեգնանքը, սեւ հիւմորը: Ահագին ողբերգութիւնը կը բախի անտարբերութեան, ժխտողականութեան պատին, եւ ցաւը, ոչ թէ արցունք, այլ «վշտի ծիծաղ» կ'առաջացնէ: Այս բոլորով հանդերձ, *Խալիկը* գործին մէջ Ա. Վարդանեան կը բաժնայ բոլոր փակագիծները ու սեւով սպիտակի վրայ կ'արձանագրէ. «*Մեր ազգը... հողի՛, միայն հողի պէտք ունի, ուրիշ ոչինչ*»³⁷:

1878ի Սան Ստեֆանոյի եւ յատկապէս Պերլինի վեհաժողովներով Հայկական Հարցը միջազգայնացաւ ու դադրեցաւ հայ-թուրք երկկողմանի խնդիր մը ըլլալէ: Իր որոշ առաւելութիւններուն հետ, միջազգայնացումը իր հետ բերաւ նաեւ օտար պետութիւններուն, «քրիստոնէայ աշխարհ»ին հանդեպ յուսախաբութեան զգացում մը: Վարդանեանի *Հեղձակը* (1989), *Կանկրուկը* (1981) 8 տարի ետք կրկին կ'անդրադառնայ Հայկական Հարցին բայց ինչպէս նշուեցաւ, այլաբանութեան անսահմանաց արտացոլումով մը: Ա. Վարդանեանի *Շաղամաթը* (1979) գործին մէջ սոսկ միջանկեալ տեսարանով մը ներկայացուած «իր ծագերը կերած կատուին» սուր հեգնանքի ենթարկուած դատը³⁸ *Հեղձակը*ին մէջ կը կազմէ ամբողջ թատերախաղին նիւթը, հայ-թուրք յարաբերութիւններուն ընդմէջէն տալով ոմն Արտակի,

³³ *Լաւ Սը*, էջ 246:

³⁴ *Խաղ Սը*, էջ 602:

³⁵ Նոյն, էջ 548:

³⁶ Նոյն, էջ 549:

³⁷ Նոյն, էջ 452:

³⁸ Նոյն, էջ 343:

Երջանիկի ու Խորենի՝ ռուսի, ամերիկացի-երոպացիի ու գերմանացիի անկրկնելի կերպարները՝ փոխադարձ մրցակցութեան, աշխարհաքաղաքական հարցերու առաջացման կամ լուծման մէջ անոնց դերակատարութեան ու ազգային բնորոշ գիծերուն ընդմէջէն:

Յեղձակը բովանդակութեան կորիզը կը կազմէ արդէն յայտնի կատուին դատաւարութիւնը, սակայն ամբողջ թատերախաղը բարքերու, վարքերու, շահերու վերլուծումի միջոցով սուր ծաղրի կ'ենթարկէ դատաւորներուն՝ «մարդասեր» յորջորջուած վերոյիշեալ անձերուն, աւելի ճիշդ՝ պետութիւններուն դիրքորոշումը յօգուտ Թուրքիոյ, որոնք Նախ մահուան կը դատաւարտեն զինք, ապա կը ներեն³⁹: Այդպիսի անհեթեթ դատաւարութեան մը գործընթացով ու աւարտով, Ա. Վարդանեան դէպի անցեալ ցատոք մը կատարելով, վարպետութեամբ կը ներկայացնէ 1918-1923 ժամանակաշրջանին Թուրքիոյ մէջ ու շուրջ ծաւալուած քաղաքական խաղերը, որոնք պարտուած ու մասնատուած Օսմանեան Կայսրութենէն կեանք տուին Հանրապետական Թուրքիոյ, նուիրագործելով անոր գոյութեան իրաւունքն ու տարածքային ամբողջականութեան իրաւունքը Անգարայի դաշինքով (1921), Լոզանով (1923) եւն.:

Անհեթեթի թատրոնը կը ծաւալի առանց ժամանակի ու տեղի սահմանափակման: Իր խաղին գործողութիւնները առանց ժամանակի մէջ պարփակելու, Ա. Վարդանեան քննութեան կ'ենթարկէ Հայկական Հարցին ու Թուրքիոյ հանդէպ օտար պետութիւններուն անցեալի ու ներկայի կեցուածքները, ցոյց տալով որ անոնք դեռ չեն փոխուած: Մեր խնդիրն է պայմանականօրէն վերականգնել ժամանակն ու վայրը գեղարուեստական բնագրին մէջ:

Մասնաւոր ցուրտ պատերազմի շրջանի Թուրքիոյ ռազմավարական դիրքին գնահատման անդրադարձող հետեւեալ խօսակցութիւնը տեղի կ'ունենայ Արսէնի՝ թուրքին ու Երջանիկի՝ արեւմտեան երկիրները ներկայացնողին միջեւ. «Երջանիկ.- *Ամէն բանէ առաջ ոչ մէկ ըրածիդ արգելք կ'ըլլամ: ... Արսէն.- Յաջ քեզի ի՞նչ արժէք ունիմ: Երջանիկ.- Ինձի լաւ պահապան մը եղած ես*»⁴⁰: Թուրքին հանդէպ բարեացակամ վերաբերմունք կը ցուցաբերէ Նաեւ Խորենը՝ Գերմանիան, երբ կ'ըսէ «Մի՛ մոռնար որ ժամանակը քեզի ի նպաստ կ'ընթանայ: Դուն տեւական կը զարգանաս ու կը բազմանաս, առհասարակ քու ուզածներդ կը գործադրուին»⁴¹:

Յեղասպանութեան մէջ գերմանական մեղսակցութիւնը մատնող հետաքրքրական երկխօսութիւն մը տեղի կ'ունենայ Խորենի ու Արսէնի միջեւ.

³⁹ Յաւ Մը, Էջ 172:

⁴⁰ Նոյն, Էջ 168-169:

⁴¹ Նոյն, Էջ 172:

«Խորեն. - Երբեմն կը խորհիմ, թե քեզի նման կատարեալ ու մանաւանդ սրբացած մէկը ինչպէ՛ս կրնայ կատարեալ ծրագրուած գործ մը պակաս ձգել»:

Արսէն. - Եթէ այդպիսի բան մը տեղի ունեցած է՝ բոլորովին իմ կամքէս անկախ պատճառներով է պատահած:

Խորեն. - Միշտ ջանաս մեղցնել կամ մէջտեղէն վերցնել՝ քան վիրաւորելով յառաքիկային զանազան փորձանքներու պատճառ դառնալ: ...Խորիէ թէ երբ իր ծայնը մէջտեղէն վերնայ՝ ոչ ոք զինք պիտի յիշէ...

Արսէն. - Ես ալ խորքին մէջ ըսածիդ համամիտ եմ եւ ամբողջ սրտովս կը փափաքիմ գործադրել բայց (Երջանիկը ցոյց տալով՝ ցած) ասոնք եւ ասոր նմանները արգելք կ'ըլլան: ...[Այլապէս - Ա.Ի.] հարուածս անխուսափելիօրէն տեղին կ'ըլլայ: ...Իմ անցեալս մէջտեղն է... Ետեւս հսկայ աւանդութիւն կայ»⁴²:

Թուրք-ռուս յարաբերութիւններն ալ առկայ են *Յեղծակշիւ* մէջ: Խորեն ակնարկելով Արտակին՝ ռուսին, կ'ըսէ «Ան որ հեռացած է աւելի մեծ փորձանք մըն է [քան Երջանիկը]», որուն Արսէն կը պատասխանէ. «Ես անոր ալ գիտեմ ընելիքս. զիս հաւու նման փետտած է. զիս մերկացնել ուզած ու ծրագրած է բայց փափաքը փորձը մնաց»⁴³: Աւելի վերջ Արտակ կը խոստովանի իր քաղաքական նկրտումները. «Նախապէս գետիկը [ցամաքը Ա.Ի.] կը դիտէի, յետոյ նկատեցի թէ գետնէն զատ ջուրին [ծովուն Ա.Ի.] մէջ ալ ինծի դէմ անորոշ խնդիրներ կը մշակեն: Իսկ հիմա ալ կը լսեմ որ վերը տեղեր մը [տիեզերքին մէջ Ա.Ի.] շփոթ գործեր տեղի կ'ունենան»⁴⁴: Խօսուն է Արտակի մասին դրացի Արսէնին հետեւեալ յայտարարութիւնը. «Նախ հաւատացեալ էր՝ [իմա՝ քրիստոնեայ Ա.Ի.] փորձանք էր... Վերջը անհաւատ եղաւ, կարծեցիկը որ վտանգը փարատած է, ընդհակառակը գործը աւելի սաստկեցուց: ...Աւելի տաքնալ կ'ուզէ եղեր... արջու [իմա՝ ռուսին - Ա.Ի.] մը ինչի՛ն է պետք տաքնալն...»⁴⁵: Որքան ակնառու են Օսմանեան Կայսրութեան քրիստոնեայ փոքրամասնութիւնները պաշտպանելու ռուսական քաղաքականութեան, Ռուսիոյ խորհրդայնացման, հարաւ՝ «տաք ջուրերը» իջնելու փորձերուն ակնարկութիւնները, որոնք պատուիաս եղած են ու են Թուրքիոյ համար: Ակներեւ է ամերիկեան եւ եւրոպական ու թրքական յարաբերութիւններուն բնոյթը. Արսէն կ'ըսէ «Ես անօթութեան մէջ եմ, դուն ինծի առաքինութիւն պիտի տորկենես», Երջանիկ կը պատասխանէ. «Զանի որ

⁴² Նոյն, էջ 180-182:

⁴³ Նոյն, էջ 204:

⁴⁴ Նոյն, էջ 241-242:

⁴⁵ Նոյն, էջ 210:

ինծի անելի մերժենալու փափաքը եւ այլ ակնկալութիւններ ունիս՝ պէտք է... բարոյականդ փոփոխութեան ենթարկես»⁴⁶ եւ «Պիտի խնդամ մինչեւ այն ատեն որ լայծուկի նման ամենքդ ստեններուս մէջ կը գտնուիք ու ինձմէ կը սնանիք»⁴⁷

Հայը Բարին Է. Արսէն-Բարի յարաբերութիւնները կը շարունակեն լարուած մնալ: Բարին հեգնանքով կը յիշեցնէ իր վերապրումը՝ Արսէնին թերացումը. «Եթէ սա եզովեալ մուկը իր ամբողջութեամբ ու համայն խնամի եւ պարագաներով սատկեցնէիր, հիմա շատ անելի հանգիստ պիտի ընէիր, - ու կ'անելցնէ «մուկերը ուտելը մոռցած» Արսէնին, - այնքան ատեն որ չես յիշեր, կը նշանակէ թէ տեղի չ'է ունեցած [ասիկա առուծախ չ'է] այլ ոճիր»⁴⁸:

Ա. Վարդանեան Արսէնին բերնով պատմել կու տայ ջարդերուն, հալածանքներուն ու հակահայ քաղաքականութեան մասին. անդրադառնալով Բարիին հօր, Արսէն կ'ըսէ. «Չգացական գաղափարներ ունէր, ...Մեծ յաւակնութիւններ ունէր, ...Ըմբոստ էր, ...Քանիցս ազդարարեցի որ չընէ, ազդեցութեան տակ չմնայ, դուրսէն եկած հոսանքներէն չխաբուի, բայց մտիկ չըրաւ... չձգեցին որ ընէ: Երջանիկ - եւ դուն շնորի ըրիր ու շառափուն եւ վերջնական ապտակը գարկիր: Արսէն - Ի՞նչ կրնայի ընել, ո՞վ ուրիշ կերպ կ'ընէր»⁴⁹: Եւ այսպէս քանիցս Ա. Վարդանեան ոճրագործին խոստովանիլ կու տայ իր ոճիրը, որուն ի լուր Բարի կը մերկացնէ անոր էութիւնը. «Մորթելու, բզբտելու, կտրտելու, յօշոտելու, պատռտելու, քանդելու, աներելու, փրցնելու, կործանելու, կտտորելու, խորտակելու, ջախջախելու, բնաջնջելու, ոչնչացնելու եւ ջարդելու բնածին յատկութիւններով եւ օժտուած»⁵⁰: Ժխտական բայերու այս անվերջանալի շարանը իւրաքանչիւր կրկնումին անելիով կը շեշտէ ոճիրին էութիւնը, ծաւալը, յետագային նոյն համեմատութեամբ ընդգծելու ոճրագործը դատող դատաւորներուն նենգութիւնը, որոնք պիտի ներէին ոճրագործը:

Եւ ի վերջոյ, *Հեղձակը* կ'անդրադառնայ նաեւ հայ-խորհրդային յարաբերութիւններուն: Բարի կը խօսի, թէ ինք ներքնապէս յոգնած, սպառած եւ անպաշտպան մնացած էր, երբ օր մըն ալ «*Հրեշտակի նմանող հրէշ մը ելաւ ու իբր թէ կացութիւնը ատենի մը համար փրկեց: ...Հակառակ ամեն խոգութեան՝ զոնէ պէտք է խոստովանիմ թէ վերջապէս մէկը գէթ ժամանակի մը համար ինծի օգտակար եղաւ*»: Իհիմա միասին կ'ապրին, բայց այդ կողմէն պաղ հով մը կը փչէ: Բարի կը մտածէ անկէ վերջնականապէս բաժնուիլ,

⁴⁶ Նոյն, էջ 238:

⁴⁷ Նոյն, էջ 206:

⁴⁸ Նոյն, էջ 200:

⁴⁹ Նոյն, էջ 205-206:

⁵⁰ Նոյն, էջ 235:

որպեսզի ազատի⁵¹։ Յիշեցնենք, որ թատերախաղը գրուած է 1989ին, եւ այդ օրերուն Արցախեան պահանջատիրական շարժման առնչութեամբ, եւ հայ-ազերի զինեալ հակամարտութեան մէջ խորհրդային պաշտօնական կեցուածքը հակահայ էր, որուն իբրեւ հակադարձութիւն, հայկական շրջանակներու մէջ սկսած էին ձեւաւորուիլ հակախորհրդային տրամադրութիւններ։ Ըստւածը աւելիով կը հաստատէ Բարիի հետեւեալ արտայայտութիւնը. «*Իր հետ երկար անցեալ մը ունիմ... ատենին անոր ամենէն մեծ խնկարկունքն մէկն էի, բայց ներկայիս էն մեծ հակառակորդս եմ*»⁵²։

Հայ-թուրք յարաբերութիւններուն ամենէն փշոտ հարցերուն անդրադարձումը կ'ենթադրէ քաղաքական յանդգնութիւն, սակայն միեւնոյն ժամանակ կը խօսի գեղարուեստական խօսքի ուժին մասին, «անհեթեթ»ի ոճէն իւրովի օգտուելու մեծ կարողութեան մասին, որով օժտուած է Արթան Վարդանեան թատերագիրը։



Եղեմը ներկայացնել փորձող համարեա բոլոր թատերախաղերն ալ հիմնուած են անհատական-ընտանեկան դրամաներու, ողբերգութիւններու վրան, եւ ըստ այդմ ալ, արեւմտահայ Նորագոյն թատրերգութեան մէջ Ցեղասպանութիւնը ոչ թէ ռազմա-քաղաքական արարք մըն է, այլ՝ զուտ մարդու դէմ ուղղուած ռճիր մըն է. ահա թէ ինչու այնտեղ առաւելաբար շեշտուած են անգթութեան տարրերը, անհատական ողբերգութիւնները, որոնց իբրեւ պատճառ հայատեացութեան բնագոյր կը թուի ըլլալ լաւագոյն պատասխանը։ Սկզբնական շրջանին համար սա միանգամայն բնական էր. հեղինակներէն շատեր կը ներկայացնէին իրենց անձնական-ընտանեկան փորձառութիւնները, նախ պէտք էր հասկնալ կատարուածը անհատական գետնի վրայ, ապա զայն մեկնաբանել համազգային ոլորտի մէջ։

Արման Վարդանեան, ենթակայական եւ առարկայական պատճառներով տուաւ Հայկական Հարցի այլաբանական մեկնաբանութիւնը, քայլ մը առաջ անցնելով գրեթէ բոլոր սփիւռքահայ թատերագիրներէն։ Այս պատճառով ալ Վարդերես Գարակեօգեան արտայայտուելով յատկապէս *Հեղձակը* խաղին մասին կը գրէ. «*Ես ծանօթ չեմ գրական մի երկի, ուր մեր ազգային մեծ ցաւը, այսպէս համամարդկային պարփակումով, համակողմանի վերլուծութեամբ, այսքան զուսպ բայց եւ այսքան ցայտուն արտայայտուած լինի*»⁵³։

Այս արժանիքով եւս Արման Վարդանեան կը համարուի հայ թատերագրութեան մեծագոյն դէմքերէն մին։

⁵¹ Նոյն, Էջ 218-221։

⁵² Նոյն, Էջ 226։

⁵³ Վարդերես Գարակեօգեան, «Անտեսուած Պոլսահայը», *Արման Վարդանեանի Աշխարհը*, Երեւան 2000, Էջ 225։